

ՀՅՈՒՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Ե. ՄՊՈՒՔ ԱՆՎԱՇ ԼԵԶՎԻ ԲՆԱՑԻՑՈՒԹ

10

Ա. ՂԱՆՄԱՆՅԱՆ

Ե. ՄՊՈՒՔ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Առանձնապիտիք «Աշխատության թերի ժողովածույթ»
տուաշին հատորից

891.99(09)

14635

7-36 Հայոց մաշտական Ա.
Հ. Մարգար իսպահան
յառաջնորդ Տիգրան

10/սատ

894.99.09

ԱՅԼԻԿԱՆ է 1961 թ.

Դ-36

լրաց:

Ա. ՂԱՆԱՏԱՆՅԱՆ

միւ. գիտ. թեկնածու

398(ա7.925)

A 3/093

Ն. ՄԱՐԴԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

4(Կ)(092 Մատ) 1

Ակադեմիկոս Մարի Գիտական Հարուստ ժառանգության մեջ
նկատելի տեղ են գրավում հայ ժողովրդի բանավոր սույնագոր-
ծության վերաբերող մտքերը: Իր լեզվաբանական գործերում, և
հատկապես կովկասագիտական և հայագիտական հետազոտու-
թյունների մեջ, մեծ գիտնականը բազմիցս անդրադարձել է հայ-
կական բանահյուսության տարրեր խնդիրներին, դատողություններ
ու դիտողություններ արել վերջիններիս վերաբերյալ: -

Նա արծարծել է ֆուլորի հեթանոսական հավատալիքների
հետ ունեցած սերտ կապի խնդիրը, կանգ առնելով հատկապես
հայոց գուսանական երգերի պատմական Հայաստանի Գողթն գա-
վառում առանձնապես կենդանի պահպանված լինելու փաստի
վրա:²

Արձանագրել է հայկական առասպելների ու վեպերի մի շարք
կերպարների ու մոտիվների (Արտավազդ, Սաթենիկ, Մհեր և
այլն) Արևելյան և Արևմտյան ժողովորդների բանահյուսության
համապատասխան կերպարների ու մոտիվների հետ ունեցած
նմանության փաստը, և տվել այդ երևույթի բացատրությունը:³

Ցույց է տվել խալդական արձանագրությունների և Գեղամա
լեռներում գտնված «վիշապների»— հայոց հին առասպելների ու
վեպերի հետ ունեցած առնչությունը:

Գրել է նախարարիական իմմիգրացիայի, մասնավորապես
Վանի թագավորության շրջանից հայ բանահյուսության մեջ պահ-
պանված հերիաթների ու ավանդությունների մասին:⁴

¹ Զեկուցում, կարդացված 1944 թվի դեկտեմբերի 22-ին, Մարի մահվան
10-ամյակի առթիվ Երևանի Սոլոտովի անդամ Պետ. համալսարանի ն. Մարի
անվան կարինետի կազմակերպած գիտ. սեսիայում:

² Եպեօ լուսաբառ, 31.

³ Сборник притч Вардана, I, 84.

⁴ Избр. работы, III, 350, V 44—63, 74 և հաջ.

Բացահայտել է Հայոց եկեղեցական հեղինակների ժողովրդական բանահյուսության հանդեպ ունեցած թշնամական վերաբերմունքի պատճառները, ինչպես նաև նույն այդ բանահյուսության քրիստոնեական գրականության վրա ունեցած ազդեցության հարցը¹ և այլն և այլն:

Չնայած իրենց մեծ մասամբ ի միջի այլոց և Հարեանցիորեն արտահայտված լինելու ընդհանուր հանգամանքին, Մառի վերոհիշյալ մտքերը ըստ ինքյան հետաքրքիր են և ուսանելի:

Լավ ծանոթ լինելով ոչ միայն Հայոց, այլև Հայաստանի հարեան ու նախարնիկ ժողովուրդների լեզվին, պատմությանը, հնություններին ու ֆոլկորին, տիրապետելով գիտական ուսումնասիրության ճիշտ մեթոդին, Մառը չի բավարարվել միայն հիշյալ Հարցերի արծարծումով, այլ փորձել է լուսաբանել նաև դրանց էությունը, որքան այդ բխել է իր նպատակներից:

Դեպի Հայաստանի պատմական ճակատագիրն ունեցած իր անկաշառ հետաքրքրությամբ, Հայկական հնությունների ու գրուցյաների նկատմամբ տածած մեծ սիրո և բացառիկ էրուղիցիայի շնորհիվ, Մառը հայ ժողովրդի նյութական և հոգևոր կուլտուրայի մյուս լավագույն հուշարձանների հետ մեկտեղ կարողացել է ըստ արժանվույն գնահատել նաև Հայկական Հարուստ բանահյուսությունը, իր արժեքավոր լուման մտցնելով վերջինիս ուսումնասիրության գործի մեջ:

Ներկա հոգվածի նպատակն է՝ թեմատիկորեն խմբավորել ականավոր գիտնականի հայ բանահյուսության մասին հայտնածավելի ինքնատիպ և առավել էական մտքերը, և տալ դրանց քննական վերլուծումն ու գնահատականը:

2

Առաջին հիմնական հարցը, որի շուրջը կարելի է համախմբել Մառի տարբեր առիթներով արտահայտած մի քանի կարևոր մըտքերը՝ դա, հայ ժողովրդի իր նախնիներից ստացած բանահյուսական ժառանգության և վերջինիս, ու առհասարակ հայ ֆոլկորի, Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանների հետ ունեցած կապի հարցն է:

Մառն առաջիններից է, որ ո՞չ միայն անդրադարձել է հիշյալ Հարցին, այլև՝

¹ Надписи Сардура II, 60—61.

ա) Աշխատել է գենետիկորեն և պատմականորեն հիմնավորել այն:

բ) Բերել է նոր, ինքնուրույն փաստեր:

Խոսելով ուրարտական թագավորների մղած պատերազմների ավանդական հայ բանահյուսության մեջ թողած արձագանքների մասին, Մառը իրավացի կերպով արձանագրում է այն հանգամանքը, որ գիտության մեջ տակավին հաշվի չեն առնվել, և կամ շատ քիչ են արձարձվել Վանի թագավորության հետ կապված եւ բնույթների Հայաստանի պատմական կյանքի հետագա ժամանակաշրջանների մեջ, և առաջին հերթին նրա բնակիչների գիտակցության մեջ, գերապրուկի ձևով պահպանված հիշողությունների փաստերը:

Իբրև օրինակ այդ հիշողությունների (ժողովրդական ավանդությունների ու զրուցների) Մառը նշում է Խորենացու «Հայոց պատմության» մի շարք հատվածները, մասնավորապես՝ Տրդատի, Արշակի, Վաղարշակի և այլոց մասին եղած պատմությունները, ուր, ինչպես վկայում է նա, «...Խորենացու շարադրանքի մեջ երբեմնապես մուտք է գործում ժողովրդի խոսակցական լեզուն, ինչպես նաև ժողովրդական տրամադրությունը»:¹

Մի ուրիշ անգամ անդրադառնալով հայկական կենդանական վեպերի կամ հեքիաթների ծագման ու հնության խնդիրներին, Մառը հավաստում է զրանց մի զգալի մասի Հայաստանի նախարնիկներից մնացած լինելու հանգամանքը: Նա զրում է. «Անհիշելի ժամանակներից Հայաստանում գոյություն ունեին կենդանական աշխարհից հեքիաթներ, թերևս նաև կենդանական վեպ: Գրականայդ հարստության հիմնական մասը, հայերը հավանորեն ժառանգել կեն իրենց նախնիներից, Հայաստանում բնակվող նախարիական իմմիգրացիայից»:²

Իր մեջ բերած վերօնիշյալ օրինակները Մառը հիմնավորում է կուտուրաների փոխանցման և հետեւակցության սկզբունքներով: Նրա կարծիքով. «...խնդիրը այստեղ էթնիկապես նորոգված կամ վերաստեղծված, նոր կազմություն ունեցող բնակչության մեջ, կործանված հասարակության իդեաների ու իդեաների պահպանաման մասին է, հետեւաբար և կուտուրաների հետեւակցության մասին, ինչ թույլ աստիճանի էլ որ դա, հատկապես վերջինիս գիտակցությունը արտահայտված լիներ»: Խորացնելով և կոնկրե-

¹ Надписи Сардура II, 60—61.

² Сборник притч Вардана, I, 189.

տաշնելով իր միտքը Մառը գրում է. «...Ճիշտ է արիոեվրոպական մասսաների հարածուն հոսանքի շնորհիվ վերաստեղծվում էր տեղական բնակչությունը, սակայն վերջինս, այդու հանդերձ, համառորեն շարունակում էր պահպանել իր բուն հարեթական ծառումը, ինչպես այդ կարելի է նկատել հայոց լեզվի և հայ ժողովրդական հավատալիքների մեջ պահպանված գերապուկներից»¹.

Հայերի ստացած բանահյուսական ժառանգության հարցի հետ, Մառի մոտ, ինչպես նշեցինք վերևում, սերտորեն առնվզում է նաև այդ ժառանգության, և առհասարակ հայ բանահյուսության, Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանների հետ ունեցած կապի հարցը:

Զայյած այն հանգամանքին, որ Հայաստանը այն սակավաթիվ երկրներից մեկն է, որի թերևս ամենից ավելի են պահպանվել թե՛ բանահյուսության, և թե՛ նյութական կուլտուրայի հնագույն հուշարձանները, դրանց փոխադարձ կապի ինդիքը մեզանում անհրաժեշտ ուշադրության շի արժանացել:

Ահա թե ինչու հայկական բանագիտության համար հատուկ կարևորություն են ստանում Մառի այդ առթիվ արած դիտողություններն ու դատողությունները: Մանոթանանք դրանցից կարևորներին:

Խոսելով Խորենացու պատմության մեջ պահպանված հայկական հին վեպի վիշապազունների վերաբերյալ հատվածների մասին, Մառը գրում է. «...Հեթանոսական սատվածների հետ միասին հայ ժողովուրդը հարեթական ընտանիքից իրեւ ժառանգություն բերեց իր հետ իր զարմանալի էպոսը, որի վիշապներին վերաբերող մասը, օրինակ, չնայած այն հանգամանքին, որ ամբողջությամբ շի հասել մեզ (ավաղ, սակավաթիվ տողեր միայն եղունացու մոտ), ունի համաշխարհային նշանակություն». «...Վիշապների և վիշապազունների մասին պատմիչի կողմից հիշատակված այդ ժողովրդական զրուցները, — շարունակում է այնուհետև նա, — բոլորովին նոր արժեք են ստանում 20-րդ դարում, այն վայրկյանին, երբ Գեղամա լեռներում հայտնաբերվեցին վիշապների կամ քարե ձկների արձանները, մեր թվականությունից առնվազն հինգ հազար տարի առաջ գոյություն ունեցող այդ հուշարձանները»².

¹ Надписи Сардура II. 60—61.

² Язык и история, I, 1936, 82.

Մառի վերոհիշյաէ դիտողության մեջ ընդգծելի է երկու հանգամանք.

ա) Վիշապազունների մասին պատմող հայկական հին վեպի՝ իբրև «Համաշխարհային նշանակություն» ունեցող մի հուշարձան դիտվելը, որն անկասկած ճիշտ է, այն չափով, որևափով գա (=վեպը) կապվում է մի պաշտամունքի հետ, որի նյութական վկաները (=ձկնակերպ քարե արձաններ) գտնվել են նաև Հայաստանի սահմաններից դուրս, և

բ) «Վիշապների» ծագման ժամանակաշրջանի մասին արված ակնարկը, որի հիման վրա հնարավոր է դառնում վիշապազունների վեպի հորինման մոտավոր ժամանակաշրջանի որոշումը: Եթե վիշապ արձանները գոյություն են ունեցել «մեր թվականությունից առնվազն հինգ հազար տարի առաջ», ապա բնական է նույնպիսի հնություն վերաբերել այդ արձանների պաշտամունքի հետ կապված բանահյուսական հուշարձանին— Խորենացու կողմից բերված վիշապազունների հին վեպի պատառիկներին:

Մի ուրիշ անգամ անդրագառնալով սրարտական թագավորների սիրագործությունների վերաբերյալ Հայաստանում պատմվող ժողովրդական ավանդություններին, Մառը գրում է. «...այդ ավանդությունները տեսանելի օժանդակություն էին գտնում Հանելուկային գրերի (=սեպածե արձանագրությունների. Ա. Դ.) փաստի մեջ, որոնք (այդ գրերը. Ա. Դ.) արդեն չէին հասկացվում, բայց որոնց մեջ ըստ ժողովրդական ավանդությունների տակալին շարունակում էին տեսնել Հայաստան աշխարհի մեծ շինարարների կատարած գործերը»:¹ Մառի այս դիտողությունը, որի համաձայն Հայաստանի սեպածե արձանագրությունները կարևոր դեր են խաղացել ուրարտական շրջանի ժողովրդական ավանդությունների հարատևման գործում, ըստ էության շափազանց ուշագրավ է: Այն հիմք է տալիս մեզ առաջ քաշելու բազմաթիվ բանավոր գրույցների, ավանդությունների ժողովրդի հիշողության մեջ պահպանվելու գործում նյութական կուլտուրայի հուշարձանների (արձանագրությունների, բերդերի, տաճարների, կամուրջների և այլն) ունեցած դերի հարցը ընդհանրապես, և Հայկական բանահյուսառության պատմական տարրեր ժամանակաշրջաններին վերաբերող մի շարք ստեղծագործությունների պահպանման գործում Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանների ունեցած կարևոր դերի հարցը մասնավորապես:

¹ Համբաք Սարդուր II, 60—61.

Շատ բնորոշ է այս տեսակետից Վանի մոտ գտնվող հայտնի ՄՀերի դուռն իր սեպածե արձանագրություններով։ Կասկածից վեր է, որ այս հնագույն հուշարձանին ենք մենք գլխավորապես պարտական ՄՀերի մասին (Հեթանոսական շրջանի այդ գիցաբանական նշանավոր կերպարի) մեր ունեցած բազմաթիվ ավանդություններով ու գրուցյներով։¹ Պատահական չե, որ հիշյալ գրուցյներն ամենից շատ ու ամենից լավ պահպանվել են Վասպորականում, մասնավորապես Վանի շրջակայրում, այնտեղ, ուր գըտնը վում է «ՄՀերի դուռը»։

Ուշագրավ է նաև Կազզվանի գավառում գտնվող «Խանդութիւներգը», որն իր մոտակայքում ապրող բնակչության մեջ երկար պարեր կենդանի է պահել հայոց ազգային վեպի ամենագեղեցիկ մասերից մեկը։ Դավթի և Խանդութիւնի պատճությունը։²

Այսպես և ուրիշ բազմաթիվ օրինակներ,

Սակայն, նյութական կուտուրայի հուշարձանները միայն ժողովրդի հիշողության մեջ չե, որ կենդանի ու վառ են պահել իրենց հետ ավելի կամ պակաս շափով կապված զանազան ավանդություններ ու գրուցյներ։ Նույն այդ հուշարձաններն են, որ պատճառ են դարձել նաև հիշյալ ավանդությունների ու գրուցյների գրականության մեջ մուտք գործելուն։

Այս տեսակետից էլ դարձյալ ցայտուն է հայոց գրականության օրինակը։ Շատ հայ հեղինակներ, Խորենացուց մինչև Արքովյան և Հետո, իրենց պատմա-դրական երկերում տարբեր առիթներով հիշելով կամ նկարագրելով նյութական կուտուրայի որևէ հուշարձան, ի միջի ալլոց, մեջ են բերել նաև այդ հուշարձանի հետ կապված ժողովրդական գրուցյներն ու ավանդությունները։

3.

Երկրորդ կարևոր խնդիրը, որի վերաբերյալ տարբեր առիթներով իր դիտողություններն է արել Մասը, դա՝ հայ բանահյուսության, այլ ժողովուրդների ֆուլկորի հետ ունեցած առնչության հարցն է։

Հայագիտության համար էական նշանակություն ունեցող այս խնդիրը բազմիցս քննարկված է մեր բանասերների գործերում։

¹ «Սասնա ծոեր», Ա. հատ., Երևան 1936 թ., էջ 931, 1021, 1083, 1125 և այլն, Խմբագրեց պրոֆ. դըր. Մանուկ Աբեղյան, աշխատակց. Կարապետ Մ.—Օհանջանյանի։

² Դ. Ինձիճյան, Աշխարհագրություն. հատ. Ա., Վենետիկ, 1806 թ., 121:

Զկա մեղանում քիչ թե շատ ընդարձակ բանագիտական մի հետազոտություն, ուր ավելի կամ պակաս շափով շոշափված լինի այս հարցը: Առանձնապես կարեոր տեղ է գրավում այն հայկական դիցարանի և հայոց հնագույն առասպելների վերլուծմանը նվիրված աշխատանքների մեջ: Տարբերվելով իրարից, որոշ շափով, իրենց բերած օրինակներով, մեր բանագետները, տվյալ դեպքում, նման են իրար իրենց ընդհանուր մոտեցումով: Հայոց հեթանոսական աստվածների և վերջիններիս մասին վիպող առասպելների, այլ ժողովուրդների համապատասխան աստվածների ու առասպելների հետ ունեցած նմանությունները նրանք բացատրել են հիմնականում ուրիշներից կատարված փոխառություններով կամ կրած ազդեցությամբ: Մասի մոտեցումն այս հարցում սկզբունքուն է, Զժխտելով հանդերձ հայկական դիցարանի և բանահյուսության մեջ տեղ գտած փոխառության որոշ փաստերը, նաև բորոշիչյալ նմանություններին տալիս է հիմնականում ուրիշ մեկնաբանություն:

Քննադատելով հայ և օտար բանագետների (Պատկանյան և այլն) վերոհիշյալ տեսակետները, Մասը հաստատում է հայկական ֆոլկորի հիմնական մասի ինքնուրուցն ծագումն ու նշանակությունը, իրավացիորեն, դրա արմատները թաղված տեսնելով տեղական հավատալիքների ու առասպելների մեջ: Նա գոնում է, որ հաբեթական էթնիկական աշխարհի, Կովկասի բնակչության այդ ցեղային հիմքի ու նախահիմքի նկատմամբ մեր ունեցած զիտելիքների խորացման հետ, հայկական բանահյուսության մեջ զիտված «ազդեցությունների» և «փոխառությունների» երևույթները (=այսպես կոչված «իրանիզմը» և այլն) մեռած բաներ դուրս եկան և կամ տեղական ու առհասարակ՝ Առաջավոր Ասիայի բուն հեթանոսական էթնոկոլուտուրական երևույթների ու ձևերի, իրանական և այլ կովտուր-պատմական շերտավորումների երանգով կատարված հետագա հարմարեցման (աճառասար) արդյունք:¹ Ինչպես նախորդ խնդիրներում, այս հարցում էլ Մասը չի բավարարվում լոկ հայտարարությամբ, այլ բերում է կոնկրետ փաստեր: Այսպես, օրինակ, խոսելով հոմական Պրոմեթեոսի կովկասյան Ամերան-Ամրանի և հայկական ՄՀերի մեջ եղած նմանության մասին, նա այդ բացատրում է ոչ թե փոխառությամբ, այլ հիշյալ կերպարները ստեղծող ժողովուրդների ընդհանուր ծագմամբ, գրելով. ժեյդ արև-հերոսը, սրբազն հրո գյուտարարը, կամ ըստ հոմական

1 Избр. работы, т. 1, 87.

վերսիայի վերջինի (=կրակի. Ա. Ղ.) հափշտակիւը երկնքից, որն իր ճակատագրով սերտորեն կապված է դարբնոցի հետ, հանդիսանում է հնագույն հարեթական զրուցներից մեկը՝ հերոսի վերափոխված արև-աստծու մասին»:¹

Այսպիսով, Ամիրան-Մհերին համարելով հարեթական ընդհանուր ծուգում ունեցող և կամ իրենց ծագման մեջ շեշտված հարեթական տարրեր պարունակող արխազական, վրացական, Հայկական և այլ ժողովորդների հնագույն (=հարեթական շրջանի) աստվածներից մեկը, Մառը իր կարծիքը հիմնավորում է լեզվաբանական և դիցաբանական տվյալներով— արխազական Աբերսկի, վրացական Ամիրը և հայկական Մեհեր անունների ստուգաբանությամբ, և հիշյալ կերպարների ճակատագրի՝ դարբնոցի, և մասնավորապես արխազական դարբնոցի պաշտամունքի հետ ոմնեցած սերտ աղերսով:²

Մի ուրիշ անգամ խոսելով ասորական սիրո աստվածուհի Իշտարի՝ եվրոպական (=ֆրանսիական Իզոլդայի) և արևելյան (=հայկական Սաթենիկի, պարսկական՝ Վիսի) զուգահեռների մասին, Մառը առասպելական-վիպական այդ կերպարների նմանությունները մեկնաբանում է դրանց մի ընդհանուր սկզբնաղբյուր ունենալու, և ոչ բնավ իրարից փոխ առնված լինելու հանգամանքով:

«...Միրո Աստվածուհի Իշտարը,—գրում է նա,—որը ծագել է երկնքից— զրից, վերածնվելով վեր է ածվել սիրո— հերոսուհի տառապյալ Իզոլդային (Isult), որն իր հերթին ունի իր անկախ զուգահեռը իրանական և հայկական Արևելքում՝ հանձին հայկական Սաթենիկի (+Sat+Den—ik'e) և պարսկական Վիսի (Wi-sa→Wi-sat, Տմմ. bi-shtar, bi-sat, փաստորեն *Wi-sol): Մառի համոզմունքով ոդրանց բոլորի սկզբնաղբյուրն էլ Միջըրկրական ծովափի նախապատմական շրջանի բնակչությունն է»:³

Այստեղ էլ, ինչպես նախորդ դեպքում Մառը իր տեսակետը հիմնավորում է էթնոկոլուտորական և հատկապես լեզվական տվյալներով՝ Իշտար, Խոլդա, Սաթենիկ և Վիս անունների հընցունական նմանություններով:

Մառի հիշյալ կարգի դիտողությունների շարքում առանձնա-

¹ Избранные работы, т. V, 74.

² Անդ,

³ Անդ, III, 350.

կի տեղ է գրավում Կուտառ և Կիեվ քաղաքների վերաբերյալ Հայկական և ոռուսական լիգենդների աղերսի մասին գրածը:

Եթե նախորդ երկու օրինակները հետաքրքրական էին զիտավորապես իրենց Հարցագրմամբ, ապա այստեղ մենք գործ ունենք բազմակողմանիորեն Հիմնավորված և գենետիկորեն լուսաբանված մի գործի հետ: Մասի այս աշխատությունը, որ մի առանձին ընդուրձակ հետազոտություն է, Հիմնավայրի նմուշ է տարբեր ժողովուրդների բանահյուսական երկերի մեջ եղած նմանությունների գիտական լուսաբանման:

Էթնոկոլուտուրական, պատմակեզվաբանական ու այլ կարգի բազմաթիվ զուգահեռներով Մառը Հաստատում է, որ մինչև մեր թվականներյան 4-րդ և 5-րդ դարերը, Վանա լճի ափին Կուտառ քաղաքի և վերջինիս կառուցող Կուտ, Mel-te և Hor+e-ան անուններով երեք եղբայրների մասին պատմող Հայկական լեգենդը, որ մեջ է բերված 7-րդ դարի հայ պատմիչ Զենոր Դլակի գրքում, և որը «...նյութականորեն շփում է Հարեթական Հայաստանի նախապատմական հնագույն էպոխայի հետ», նման է Կիեվ քաղաքի և վերջինիս կառուցող Կուտ, Ռեկ և Խօրիս անուններով երեք եղբայրների մասին պատմող ոռուսական լեգենդին (բերված ոռուսական տարբերության մեջ), որը շատ մեծ արժեք ունի «ոչ միայն թուսաստանի, այլև ողջ Միջերկրականի նախապատմության համար»:¹

Նույն կարգի փաստարկումներով, Մառը, այնուհետև, ապացում է, որ Հիշյալ երկու լիգենդներն էլ ծագել են միենույն սկզբնաղբյուրից: Այդ սկզբնաղբյուրը նրա կարծիքով եղել է Պոնտական ծովագին նախապատմական շրջանում Հորինված սկզբանական մի լեզենդ, որը «...կիսվելով, տվել է երկու վերսիաներ, որոնցից մեկը փոխակերպվել է Հայկական, իսկ մյուսը ոռուսական գրքային լիգենդներում»:²

Մասի խնդրո առարկա մտքերը (Հայ և այլ ժողովուրդների ֆոլկլորի մեջ եղած նմանության և ընդհանրության մասին) մոտիկից Հիշեցնում է Հիմնականում Համբնկնում են Մարքսի և Լաֆարգի³ նույն խնդրի նկատմամբ ունեցած մոտեցմանը:

Հաճախ ծալրահեղությունների մեջ ընկնելով Հայերի ուրիշ ժողովուրդներից կատարած բանահյուսական փոխառությունների

¹ Издбр. работы, V, 44—66.

² Անդ:

³ Մարքս, Քաղ. անտշուրջ, 1932, 57. Լաֆարգ, Օչերք ու աշ. կալետ, 1926, 51.

հարցում, մեր բանագետները՝ գրեթե անտեսել են այդ երեսովի մյուս կողմը, այն է, Հայկական բանահյուսության այլ ազգերի ֆուլորի վրա ունեցած ազգեցության հարցը: Հազվագյուտ դեպքում է միայն, որ նրանցից մեկը կամ մյուսը խոսել է այդ խնդրի մասին, այն էլ միտումնավոր ձևով:¹

Մասի մոտեցումը այստեղ էլ տարբեր է: Իր աշխատությունների մեջ անգրագունալով համաշխարհային կուլտուրայի գանձարանը հայ ժողովրդի կողմից կատարված կարենք մուծանքներին (դրականության, արվեստի, ճարտարագետության և այլ գծով), նա ի միջի այլոց հիշատակում է նաև հայկական բանահյուսության՝ արևելքի և արևմուտքի ֆուլորի վրա ունեցած ազգեցության երկու ուշագրավ փաստեր: Այսպես, օրինակ, խոսելով այն կարևոր գերի մասին, որ ունեցել է հաշակրաց արշավոնքը եվրոպական և արևելյան ժողովուրդների հեքիաթների տարածման գործում, նա գրում է, «հաշակրաց արշավանքներին, որոնք մերձեցրին կիլիկյան հայերին եվրոպայի հետ, պետք է, իհարկե, նշանակալից դեր հատկացնել այս խնդրում: Սակայն, հարկավոր է միայն նկատի ունենալ, որ եթե հայերը կիլիկիայում և հարեան իշխանությունների մեջ կարող էին ընդունել եվրոպական հեքիաթներ, ապա միևնույն ճանապարհով արևելյան մոտիվները կարող էին հայերից անցնել եվրոպացիներին: Գլխավոր հարցը, ի միջի այլոց, այն է, որպեսզի ձեռագրական բեկորների հիման վրա, պարզել միջնադարյան հայ հեքիաթների բնույթին ու քանակը, և վերջիններիս առնչությունը, եթե այն գոյություն ունի, եվրոպական հեքիաթների հետ: Իսկ հայերի և եվրոպացիների շփման ուղիները շատ բազմազան էին: Հայ ժողովրդի ստեղծագործություններին եվրոպացիք կարող էին ծանոթանալ բուն եվրոպայում, հայկական գաղութներում, թերևս օրինակ՝ Սալեքնոյում»:²

Մի ուրիշ անգամ խոսելով «Տրիստան և Իզոլդա» հայտնի էպոսի ծագման և տարածման խնդրիների մասին, Մատը այն համարում է «հաբեթական միջավայրի ծնունդ», որը «ներկայացնում է զուտ հաբեթական և կամ հաբեթականների հետ խառնված որոշ ժողովուրդների բարբերը»: Նա գրում է, «...հայ ժողովուրդը այդ էպոսի ոչ միայն ավագ ժառանգորդներից մեկն է, այլև ավագա-

¹ Պարսպանակներ, Պատմություն մատենադրության, հո. Ա., Թիֆին, 1865 թ. էջ 186: Գ. թ. Տեր - Պարսպանակներ, Լեռնականք Բ., Եղումիք, 1912 թ., էջ 64-66:

² Сборник притч Вардана, I, 570-571.

գույն ժառանգը բոլոր մնացած ժողովուրդների մեջ համամարդակային աղբյուրից եկող կուլտուրական այդ ավանդի, նրա ամբողջականության հավատարիմ պահապանը, սնուցանողն ու տարածողը՝ Արևելքում և Արևմուտքում»:¹

Ներկա դեպքում կարեորն ու գնահատելին ոչ այնքան Մատի կողմից բերված հիշյալ և նման մի երկու այլ փաստերն են, որքան նրա հարցադրումը:

4

Բանագիտական հաջորդ հարցը, որը ավելի կամ պակաս շափով ենթակա է եղել Մատի քննությանը, դա հայ ավանդական բանահյուսության հայոց հին և միջնադարյան գրականության հետ ունեցած փոխհարաբերության հարցն է: Հարկ է նշել, որ Մատի մտքերը այստեղ չունեն այն ինքնատիպությունն ու նորությունը, ինչ մենք տեսանք վերևում: Այդ մտքերը նրանից առաջ և նրա օրով, հիմնականում, արծարձված են եղել և ուրիշների կողմից: Սակայն անվանի գիտնականի լուսավոր ուղեղի առանձին առկայծումները կարելի է տեսնել նաև այստեղ: Բացի այդ, այն, ինչ ալլոց մոտ հաճախ արտահայտված է ընդհանուր ձևով, առանց փաստերի մեկնարանման, Մատի մոտ որոշակի է ու կոնկրետ, հիմնավորված պատմական պատճառներով:

Այսպես, օրինակ, խոսելով հայոց հին գրականության՝ ժողովրդի բանավոր ստեղծագործության և մասնավորապես Հեքիաթների նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքի մասին, Մատի միանգամայն ճիշտ կերպով բացահայտում է այդ վերաբերմունքի արմատները: Նա գրում է, «հայ գրականությունը, որը բացառապես նվիրված էր երկնային խնդիրներին ու վերացական նյութերին, անցյալում, ընդհանրապես քիչ էր հետաքրքրվում երկրայինով ու իրականով, իսկ այնահիս աշխարհային բաների մասին, ինչպիսիք էին ժող. Հեքիաթները, գյուղացիական միջավայրի նկատմամբ լուսավորյալ խավերի ունեցած ընդհանուր արծամարդական վերաբերմունքի պատճառով, այն (=հայ հին գրականությունը՝ Ա. Պ.) պահպանում էր մեռելային լուսվիուն: Հեքիաթների նկատմամբ հայ եկեղեցական գրողներին նման վերաբերմունք ու-

¹ Аրмянская культура, ее исторический очерк.. („Язык и история“, 1, 84).

Ահնալու Մառի կարծիքով պարտավորեցնում էին եկեղեցու տրադիցիաները»:¹

Նույն կերպ Մառը գնում է նաև Հայոց միջնադարյան գրականության ժողովրդի բանալոր ստեղծագործության, մասնավորապես կենդանական հերթափների նկատմամբ ունեցած բարյացակամվերաբերմունքի հարցը, բացարելով այն փոփոխված հասարակական պայմանների շնորհիվ գրականության մեջ դեպի ժողովրդի ստեղծագործությունը կատարված դիմադարձով։ Նա գրում է. «...բավական էր միախ, որ աշխարհականը գրիչ ձեռքն առներ, որպեսզի վարագույրը բարձրանար։ Հին Հայաստանի միակ աշխարհական հեղինակին, Գրիգոր Մագիստրոսին ենք մենք պարտական Հայոց կենդանի հնության մի շարք պատառիկների պահպանումով»;² Եվ ապա. «...կենդանական հերթափները հայերի մեջ չին դադարում ապրել գյուղացիական միջավայրում, ուր դրանք քշված էին քրիստոնեական լուսավորության շատագույների կողմից և կրթված դասակարգերի անտարբերությամբ կամ արհամարհանքով։ Խսկ երբ միշին դարերում Հայոց գրականության աշխարհականացման հետ ժողովրդական հոսանքը ճանապարհ հարթեց իրեն Համար դեպի վարդանյան ժողովածուները, ապա այդ նույն ճանապարհով կենդանական հերթափների աշխարհից վերջինիս մեջ մտավ և ժողովրդական ստեղծագործության շիթը»;³

Հայոց հին գրականության հայկական ավանդական բանահյուսության հետ ունեցած փոխարարերության հարցում կենտրոնական և կարևոր տեղ է գրավում Մ. Խորենացու ժողովրդական բանահյուսության նկատմամբ ունեցած վերաբերմունքի խնդիրը։ Հայ հին հեղինակներից և ոչ մեկը, այս տեսակետից, այնքան նշութ չի տվել դատողությունների ու վեճերի, որքան այդ արել է Խորենացին։ Եվ դա հասկանալի է։ Խորենացին մեր հին գրականության այն եղակի գեմքերից է, որն ամենից ավելի լուրջ վերաբերմունք է ունեցել ժողովրդական ստեղծագործության նրակատմամբ, և ամենից ավելի է օգտվել այդ ստեղծագործությունից։

Ահա թե ինչու նրա պատմության աղբյուրների և հայկական հին ֆոլկլորի մասին գրող բոլոր բանադիտները (Հայ և օտարազ-

¹ Сборник притч Вардана, I, 519.

² Նույն աեղը

³ Նույն աեղը, էջ 561.

գի) անխտիր անդրադարձել են վերոհիշյալ խնդրին, և տվել համապատասխան բացատրություն:

Նրանցից ոմանք ծայրահեղության մեջ ընկնելով այն տեսակետն են արծարծել, ըստ որի Խորենացու գործի զգալի մասը իրեն թե գրված է Ֆոլկորային նյութերի հիման վրա:¹

Ուրիշները, ընդհակառակը, փորձել են ժխտել նրա Պատմության մեջ եղած հիշյալ նյութերի փաստը:²

Քերն են միայն, որ կարողացել են գիտական ճիշտ մոտեցմամբ որոշել ժողովրդական բանահյուսության տեղն ու դերը Խորենացու պատմության մեջ և տալ դրա վերլուծումն ու գնահատականը:³

Այդ քշերից մեկն է Ն. Մառը:

Խորենացու աղբյուրների բննադատությանը նվիրված իր մի աշխատության մեջ, Մառը տվել է մեզ հետաքրքրող հարցի սեղմ, բայց սպասիչ ու ճիշտ պատասխանը: Ահա թե ինչ է գրում նա այդ առթիվ. «Ե. Խորենացին մեկից ավելի անգամ իր արգահատանքն է հայտնում ժողովրդական հեքիաթների հանդեպ, այն ժամանակ, երբ նրա պատմության մեջ այնքան լայն տեղ է հատկացվում նույն այդ հեքիաթներին... պատմիշի այս հակասական մոտեցումը հասկանալի է դառնում, երբ մենք նկատի ենք ունենում նրա երկու կրակների մեջ լինելու վիճակը. մի կողմից հայրենի երկրի քաղաքական պատմության վերաբերյալ հավաստի տվյալների բացակայությունը, մյուս կողմից իր նախորդների գործերը, ուր իբրև պատմություն բերված էին ատելի ժողովրդական հեքիաթները, չսիրված ուամկական հասարակ լեզվով, անընդունելի ժողովրդական բանաստեղծական ձևի մեջ:...Խորենացին ակամայից օգտվում է հեքիաթներից, բայց ճիշտ է արդյոք, որ նա այդ հեքիաթները մտցնում է իր պատմության մեջ: Ո՛չ, նա խոսափում է դրանից: Խորենացին միայն հիշատակում է դրանք, իրու բոլորին արդեն հայտնի բաներ, բերելով ավելի կամ պակաս ընդարձակ առանձին հատվածներ, երբեմն առաջին խոսքերը միայն, իր ողջ ուշադրությունը կենտրոնացնելով դրանց մեջ եղած պատմական իմաստի բացահայտման վրա»:⁴

Հակառակ Գր. Խալաթյանի, ըստ որի Խորենացու «վեպ» կոչ-

¹ Մ. Էմին, Վեպը Հոռյն Հայստանի, Մասկա 1850:

² Գր. Խալաթյան, Արմանսկий էպոս, Մոսկվա, 1896.

³ Աքեղյան, Հայ ժողովրդական առասդեկները, Վազարչապատ, 1899.

⁴ К вопросу об источниках М. Хоренского.

ված աղբյուրները շինծու են, և որ «վեպ» անվան տակ «ծածկը-ված են մի ամբողջ շարք զանազան, թարգմանական և ինքնագիր, գրավոր հիշատակարաններ», որոնք Խորենացու իսկական, բայց «Թաքցրած աղբյուրներն» են, և որ Խորենացու շատ անգամ հիշած «Հայոց վեպը» սովորաբար գրեթե ծագում ունի և մեծ մասմբ Աստվածաշնչի մոտիվների շատ ու քիչ վարպետ փոխագործումն է, որ Հենց իրեն պատմագրի գրչին է պատկանում¹, — հակառակ այդ բոլորի, Մասր գտնում է, որ այդ վեպը եղել է ժողովրդի մեջ, բայց եկեղեցական հեղինակների ժող. բանահյուսության նկատմամբ ունեցած թշնամական վերաբերմունքի պատճառվ, շատ քիչ է գրի առնվիլ: Նա դրում է, «...ժող. մոտիվների աղբատությունը հայ գրականության մեջ, պետք է բացատրել ոչ թե հայկական վեպի աղբյուրների բացակայությամբ, այլ այն թշնամական զգացումով, որ տածում էին հայ գրագետները հարազատ վեպի նկատմամբ: Այդ երեսությունը ի միջի այլոց միայն հայ գրականության մեջ չէ որ նկատելի է»:²

Որ իսկապես Խորենացու Պատմության մեջ հիշատակված առասպելներն ու վեպերը վերցված են հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության գանձարանից, հաստատվում է մի շարք փաստերով: Այդ փաստերը կարելի է գտնել Մ. Աբեղյանի վերեւում հիշատակված աշխատության մեջ, որ լույս է տեսել Մասր հիշյալ քննադատությունից մեկ տարի հետո (գրված լինելով վերջինիս հետ միաժամանակ), և որտեղ, ի դեպ, տրված է նաև Մասր դիտողությունների գնահատականը, իրեն վկուրց և մտացի քննադատություն»:³

Քննարկվող Հարցի կապակցությամբ հետաքրքրական են նաև ժողովրդական բանահյուսության հայ եկեղեցական-քրիստոնեական գրականության վրա ունեցած ազդեցության մասին Մասր արած ուշագրավ դիտողությունները: Որքան մեզ հայտնի է, այս Հարցը համեմատաբար քիչ է արծարծվել մեր գրականության մեջ: Մինչդեռ դա շափականց կարևոր մի խնդիր է: Քրիստոնեական եկեղեցին, նրա հետ նաև քրիստոնեական գրականությունը, ոչ միայն Հայաստանում է, այլև օգտագործել և ծառայեցրել է իր շահերին ժողովրդական բանահյուսությունը: Դրա լավագույն տպացուցներն են հայոց վարքաբանական գրվածքները, որոնք համեմված են,

¹ Խալատյան, Արմ. օպօս, 205.

² Византийский вре́менник V, вып. I, II, 252—253.

³ Մ. Աբեղյան, Հայ ժող. առասպելները, Վաղարշապատ, 1899 թ. 5:

ֆոլկլորային սյուժեներով ու մոտիվներով, և որոնք այս տեսակի տից տակավին շեն ուսումնասիրված։ Իր մի շաբթ գրվածքներում Մառը ու միայն առաջ է քաշել վերոհիշյալ խնդիրը, այլև տվել է դրա հասարակական աստառը, ընդգծել է վերջինիս նշանակելիությունը։

Այսպես, օրինակ, խոսելով քրիստոնեական գոքային սյուժեների ժողովրդի բանավոր ավանդության մեջ կրած վերափոխությունների մասին, նա գրում է. «...Կենդանի, ոնդադար բերանից բերան անցնող աշխարհիկ վեպը, իր ողջ պարզունակությամբ հանգերձ, տալիս էր ազատ, տարերային ստեղծագործության գեղցիկ նմուշներ, որոնք բավարարում էին ժողովրդի գեղարվեստական պահանջները»։¹

Մի ուրիշ անգամ, Մառը խոսում է այն մասին, որ քրիստոնեությունը ժողովրդի հետ կապը պահպանելու համար ճանապարհ էր բաց անում գեպի իր նոր կրոնը անախաքրիստոնեական ժողովրդական պատկերացումների, ուամկական տոնների ու պաշտմունքների համար», ինչպես նաև «էպիքական՝ հերոսների» համար, իբրև օրինակ Հիշատակելով «ճարեթական բնակչության վիպական գրուցների առարկա, առալուտյան լուսաբացի աստվածություն Կարմիր Վարդանին», որ հետագայում, — ինչպես նշում է նա՝ «վեր է ածվում տիպիկ քրիստոնեական հերոսի»։²

5

Չլինելով հայ բանահյուսության մասնագետ — հետազոտող Մառը, հմտությամբ լուծել է այդ բանահյուսության մի քանի վիճելի, մութ հարցեր, հաջողությամբ քննադատել վերջիններիս վերաբերյալ հայ և օտար բանագետներից մի քանիսի սխալ կարծիքները։ Երկու գեպքում էլ (թե՛ ինքնուրույն վերլուծումների, թե՛ ուրիշների ասածների քննադատության) Մառի դիտողությունները արժանի են հատուկ ուշադրության իրք լուրջ, հիմնավոր և գիտականորեն պատճառաբանված դիտողություններ։

Կանգ առնենք դրանցից երկուսի վրա։

Ուշադրավ է, օրինակ, հմուտ հայագետի դիտողությունը Խորենացու մոտ պահպանված «երգք թուեկաց» տերմինի վերաբերյալ։³

¹ Сборник притч Вардана, I, 523.

² Избранные работы, V, 360—361.

³ Из летней поездки.. 506.

Քննադատության և նթարկելով Հիշյալ տերմինին ուրիշ բանասիրների տված մեկնաբանությունները, ըստ որոնց «թուելիաց երգք» նշանակում է՝ 1. ժամանակադրական երգեր (Մ. Էմին), 2. մետրիքական ստեղծագործություններ (Դյուզորիկ), 3. հանգավոր դորձեր (Մխիթարյանների), իբրև ըստ էպիթյան սխալ մեկնություններ, Մառը տալիս է իր ինքնուրույն և նոր բացատրությունը: Նա գրում է. «...րուելիք բառը ևս դուրս եմ բերում քուել բայց, այս երկու բառերն էլ հայոց հին բանաստեղծության մեջ, ըստ երկույթին, ունեցել են հատուկ նշանակություն և ցույց են տվել ոտանակոր հորինելու կամ արտաքերելու եղանակներից մերը, սակայն չեմ կարող ասել, թե ինչին են վերաբերել դրանք, եղանակակիր ընթերցանությանը (առ քանզի), ուշիտափիվ արտասահմանությանը, թե՝ առոգանումին (գեկլամացիա): Ես մինչև անգամ չեմ համարձակվում այս բառը նմանեցնել բիվ բառին, որը գործածվում է որոշ տեղերում արարողական, աստվածաբանական գրքերի մեջ, որոնք ոչ թե երգվում, այլ կարգացվում են յուրահատուկ ուշիտափիվ. թվում է թե ինձ համար բավարար կրծամարզի և այն, եթե կարողանամ մատնացուց անել թեկող մի դեպք, ուր թվել բայց գործածված լինի վերոհիշյալ նշանակությամբ, որից ըստ իս ծագել է բուելիք բառը»:¹

Իր միտքը հաստատելու համար Մառը իբրև օրինակ մեջ է բերում Խորենացու խոսքերը Տուրքի մասին «...թուելին նմա երդ բանիցն», որ նա թարգմանում է՝ «...նրա պատվին առօգանաւմ էին...»² Ըստզգումը մերն է. Ա. Ղ.): Գիտական մեծագույն զդուցավորությամբ արված այս կուածումը, տարբերվելով «երգք թուելաց» տերմինին ուրիշ բանասիրների կողմից տրված բացատրություններից, Հիշյալ կերպով մեկնում է վերջինիս իսկական իմաստը: Խորենացու պատմության մեջ եղած հայիական առաստելներին նվիրված իր հայտնի հետազոտության մեջ, անդրադառնարկ Մառի Հիշյալ մեկնությանը, Մ. Աբեղյանը գրել է. «...Հարկ է նկատել, որ «թուելիաց» երգերի այս բացատրությունը (խոսքը իրեն Մ. Աբեղյանի բացատրության մասին է. Ա. Ղ.) արդին գրած էինք երբ որ Խալաթյանի «սեպի» (խոսքը Գր. Խալաթյանի «Արմ. օնթ» գրքի մասին է. Ա. Ղ.) եր. 197, աշք փախցրած ծանոթության մեջ նկատեցինք, որ Մառը 1890 թվին յուր գրվածքի մեջ «Из летней поездки» (եր. 5—6 Зап. Вост. отделен. I, 211—241),

¹ Из легкой поездки, 506.

² Նույն տեղը

ուշադրության կենտրոնում է ունեցել նրա պատմական ճակատագրի, պետական, քաղաքական կյանքի հուզող հարցերը:

Ենեկով վերոհիշյալ նրկու կարգի երևությունների փոխադարձ պայմանավորվածության փաստից, Մառը, Հաճախ, կուլտուրայի որևէ հուշարձանի բաղմակողմանի ու խոր վերլուծմամբ, կարողացել է բաց անել պատմական հեռավոր անցյալում Հայաստանի կյանքում գոյություն ունեցող կարգերի, տնտեսական և այլ հարաբերությունների վարագույրը: Եվ ընդհակառակը, վերջինների օգնությամբ նա Հաճախ վերծանել է Հայ ժողովրդի նչութական և հոգերը կուլտուրայի շատ հուշարձաններ, գնահատել դրանց արժեքն ու արժանիքները:

Այսպես, օրինակ, խոսելով այն մասին, որ Բագրատունի Հայ իշխանները հատուկ մտադրություններ են ունեցել հավաքել տաւու իրանական ծագում ունեցող ժողովրդական զրուցները, Մառը այդ երևությը բացատրում է հետևյալ հասարակական-քաղաքական պատճառներով: Նրա կարծիքով Բագրատունիներն այդ անում էին այն հույսով, որ Հայ ֆեռազաներին հարազատ իրանական կուլտուրայի սկզբունքներով, ի հակաշիռ մուսուլմանական քաղաքակրթության վերականգնեն Հայաստանի թագավորությունը: «Բայց Հայ հեղինակները, — ասում է նա, — որոնք դաստիարակված էին հունական օրինակներով, մուսուլմանականից ոչ պակաս խորշում էին նաև իրանականից:¹

Մառի այս միտքը, որը հիմնված է Խորենացու այն տեղեկության վրա, ըստ որի Մահակ Բագրատունին հատուկ պատվեր է տվել մեր պատմիչին պարաից առասպելները հավաքելու մասին, հետաքրքիր կերպով բացատրում է մի Հարց (Բագրատունիների ձգտումը իրանական առասպելները հավաքելու), որը, որքան մեզ հայտնի է, մինչ այդ քիչ է արժանացած եղել ուրիշների ուշադրությանը:

Մի այլ անդամ խոսելով «Հայագիտության խնդիրների հարցի շուրջը» և մեկնարանելով Հայրենասիրության էությունը, ինչպես նաև մարդկանց հոգեկան պահանջների և հումանիտար առարկաներով զբաղվելու ցանկության հարցերը, Մառը այդ բոլորը միանգամայն իրավացիորեն կապում է մարդու հասարակական ձգտումների և մասնավորապես դեպի հարազատ հնություններն ու զրուցներն ունեցած նրա զգացումների հետ: Այդ հնություններն ու զրուցները (իմա՝ ժողովրդական բանա-

¹ Կաք. կուլտուր. մир и Армения, 10

որ մեզ չեր հաջողված յուր ժամանակին կարդալ, մի նման ձեռվ բացատրած էր թուել բայից: Այդ գրվածքը ապա ձեռք բերելով, ուրախությամբ տեսանք, որ նրա բացատրությունը, իսկապես «Հոռահումը» (ծօգակա), ինչպես ինքը կոչում է, էությամբ նույն է ինչ որ մերը»:¹

Մի այլ անդամ, վերստին անդրադառնալով նույն հարցին, Մառը «Թուելեաց երգը» տերմինը բացատրում է թովել բայով, համարելով հիշյալ երգերը կրօնական-հեթանոսական արարողությունների միջոցին հորինվող ու ասվող թովական-կախարդական բնույթի ստեղծագործություններ (տես՝ ՅՅՕ, XI, 300—302 ՊօԵ և այլ առաջնային մասին):²

Նույն բնույթին ունեն նաև Մառի գիտողությունները «զրույց» տերմինի, Վահագնի ծննդյան երգի մի երկու տողերի, Արտաշիսյան վեպի «Շիկափոկ պարան», «Աղատ Մասիս» արտահայտությունների և նման մի շաբթ այլ բանահյուսական բառերի, ոճերի մասին:³

Դրանք բոլորն էլ աշքի են ընկնում իրենց սրությամբ ու համոզությամբ:

Իր «Հայ ժող. առասպելների» մեջ, որտեղ տրված է հիշյալ բառերի ու արտահայտությունների բազմակողմանի վերլուծումը, Մ. Աբեղյանը ընդունում և հաստատում է Մառի ասածների մեծագույն մասը:⁴

A 3/093

6

Մառի տեսադաշտից շի վրիպել նաև հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության հասարակական-գաղափարական կողմբ: Եվ դա միանգամայն բնական է: Նա այն տիպի գիտնականներից է, որոնց մոտ գիտության տեսական և բանասիրական հարցերը միշտ սերտորեն առնչվել են հասարակական կյանքի խնդիրների հետ:

Զբաղվելով հայ ժողովրդի նյութական և հոգեոր կուտուրայի հուշարձանների ուսումնասիրման գործով, Մառը շարունակ իր

¹ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ 1899 թ., 70:

² Բազան. Վրեմենիկ V, 206.

³ Մ. Աբեղյան, Հայ ժող. առասպելները, Վաղարշապատ 1899 թ., 18, 29 և հաջուկ:

Հյուսությունը. Ա. Ղ.) միանդամայն ճիշտ կերպով համարելով մարդկային լավագույն ձգումների ու հույզերի կենդանի ներշնչարաններ, հայրենասիրության կրակը մարդկանց մեջ միշտ անմար պահող կարևոր գործոններ: Ահա թե ինչ է գրում նա այդ առթիվ. «Ով անմասն է հարազատ երկրի ճակատագրին, նա չե կարող հաղորդակից լինել դեպի հայրենիքը տածվող ավելի վերացական, առավել բարձր զգացմանը. ում մեջ խեղդված կամ խացված են հարազատ հնությունների ու զրուցների նկատմամբ եղած կապվածության բնածին զգացումները... նրանց մեջ... մեզ չպետք է զարմացնեն հոգեկան պահանջների բացակայությունը և առհասարակ անտարբերությունը հումանիտար առարկաների նկատմամբ»:¹

Բնորոշ է այս տեսակետից նաև Մառի մի դիտողությունը՝ հայկական ավանդական բանահյուսության՝ հայ ժողովրդի ազգային ինքնապահպանության գործում ունեցած կարևոր դերի վերաբերյալ: Խոսելով այն գործոնների մասին, որոնց զրությամբ հայ ժողովուրդը կրողողացել է պահպանել իր ինքնությունն ու ինքնուրույնությունը ֆիզիկապես տիրապետող օտարազգի բռնապետությունների ծանր լծի տակ, Մառը գրում է. «Քրիստոնյա Արևելքի ամենակուտարական ժողովուրդներից մեկի մոռացված հիմնական մասը (խոսքը հայերի մասին է. Ա. Ղ.), բանդված էր վայրենացման արհեստական վանդակի մեջ, իշեցված ուայացի ամբոթալի դրությանը, արհամարհված ֆիզիկապես տիրապետող մուսուլմանական ազգի աշբու: Եվ այդ լրած, մոռացված զյուղացիական բնակչությունը, տակավին գտնում էր ուժեր իր ազգային դեմքի հատկանիշները՝ լեզուն, հավատը և ազգային հպարտության զգացումը պահպանելու համար: Ազգային ինքնապահպանման այդ գործում նրան զրավիկ էր զառնում քրիստոնեությունը, բայց արդեն ոչ թե եկեղեցական, այլ կենցաղային, իր դարավոր ժողովրդական ուվատագնացություններով, վերջիններիս ժամանակ տեղի ունեցող ժողովրդական հավաքույթներով ու խաղերով, նորան դաստիարակում էր զրականությունը, բայց ոչ գրավոր, այլ բանավոր-ժողովրդական՝ գուսաններով ու աշուններով, որոնք իրենց հերթին ազդում էին հոգևոր հեղինակների վրա, նրան ներշնչում էր պատմությունը, բայց արդեն ոչ թե գրքային, այլ կենդանի պատմությունը՝ արտահայտված ժողովրդական ավան-

¹ К вопросу о задачах арменоведения, т. 18.

զությունների և հնագույն շենքերի ավերակների գեղարվեստական
ձևերի մեջ:¹

Հայ բանահյուսության տարբեր հարցերի ու լութերի մասին
այլ և այլ առիթներով Մատի կողմից հայտնված մտքերը չեն
սահմանափակվում վերոհիշյալով:

Նրա թողած բազմահարուստ ժառանգության մեջ (ինչպես
տպագիր, այնպես էլ անտիպ) մենք գտնում ենք, ճիշտ է ավելի
թուոցիկ և նվազ զարգացված ու հիմնավորված ձևով, բազմաթիվ
այլ ուշագրավ մտքեր և ակնարկներ, դատողություններ ու դիտո-
ղություններ ևս:

Այդպիսիք են, օրինակ, Սասունցի Դավթի՝ հայ ժողովրդա-
կան բանահյուսության հազվագյուտ հուշարձաններից մեկը լինե-
լու, հայ հին ու նոր վեպերի բովանդակության կապի և ձեւական
հարաբերությունների,² ժողովրդական բանահյուսության հայագի-
տության համար ունեցած կարևոր նշանակության,³ Հայկի և
Տիգրանի առասպելների դիցարանական արմատների,⁴ քրդական
բանահյուսության հայերի մեջ ունեցած լայն տարածման պատ-
ճառների, հայոց եկեղեցական երաժշտության ազգային-ֆոլկո-
րալին ակունքների մասին նրա հայտնած մտքերը, և էլի մի քա-
նի ուրիշները:

Սակայն, թվում է թի վերևում բննարկված մտքերն էլ բա-
վական են, հաստատելու հայ բանագիտության համար զրանց
ունեցած կարևորությունը: Այդ մտքերը նկատելի ազդակ կարող
են դառնալ գիտական որոնումների, ստեղծագործական հղացում-
ների և տեսական ընդհանրացումների համար: Դրանց հետագա
խորացումն ու ընդլայնումը հնարավորություն կտա լուծելու հայ
ժողովրդի բազմադարյան հարուստ բանահյուսության շուառումնա-
սիրված և կամ թերի ու սիսալ մեկնարանված մի շարք կարևոր
հարցերը:

Մատի հայագի անվանի աշակերտներից մի երկուաը այդ
ուղղությամբ արդեն կատարել են առաջին հաջող քայլերը:⁵

1 Кавказ и памятники его духовной культуры, 1919, 46.

2 Зал. Вост. отд. IV, 414—415.

3 Избр. работы I, 18.


4 Առաջն ակա, IV, 256.

5 И. Орбели, Арм. народ. эпос («Давид Сасунский» Изд. АН СССР, М. Л. 1939, VII—XVIII):

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031093



નાગરિક

(૩૮)